Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Կիր. 2 Փետր. — Ս. Գատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Արդ. Գատուէրեան։ Ս. Գատարագը ձայնասփռուեցաւ Յորդանանի Հաշիմական ռատիոկայանէն։

● Կիր. 9 Փետր. — Ս. Գատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղամ Արդ. Զաքարեան։

● Կիր. 16 Փետր. — Ս. Գատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Դանիէլ Արդ. Շամլեան։

● Կիր. 23 Փետր. — Բարեկենդան Առաջաւորի պանոց։ Ս. Գատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ։ Ժամարարն էր Արժ. Տ. Կարապետ Քհնյ. Անդրէասեան։

● Դշ. 26 Փետր. — Տեառնընդառաջի մեծահանդէս նախատօնակին և անոր յաջորդող «Անդաստանի» ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.։

— Գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ պաշտուած «Եկեսցէ» և Հակման կարգերուն նախագահեց Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.։

— Գիշերը Մայրավանքի մեծ բակին մէջ կը վառէր Տեառնընդառաջի աւանդական կրակը։

● Եշ. 27 Փետր. — Տեառնընդառաջ։ Օրուան հանդիսաւոր Ս. Գատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց և աւուր պատշաճի քարոզեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս., բնաբան ունենալով «Լոյս ի յայտնութիւն հեթանոսաց, և փառս ժողովրդեան քում Իսրայելի»։

● Ուր. 28 Փետր. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.։

● Շբ. 29 Փետր. — Ս. Սարգսի զօրավարին։ Ս. Գատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգսի հնագարեան մատարան մէջ։ Ժամարարն էր Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր։ Ս. Գատարագէն ետք, ըստ սովորութեան, կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն, Ս. Ա. Թոռոյս հանգուցեալ բարերար Գալուստ Կիւլպէնկեանի հոր՝ Սարգսի հոգւոյն համար։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Ուր. 14 Փետր. — Իսլամաց Էլ-Ֆիթր տօնին առթիւ, կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Գատրիարք Հայրը, ընկերակցութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.ի, Աւագ Թարգման Հոգշ. Տ. Գէորգ Վրդ.ի և Քարտուղար Տիար Կարապետ Հինդլեանի, շնորհաւորական այցելութիւն տուաւ Երուսաղէմի Վեմ. Կառավարչին, Ոստիկանապետին, Քաղաքապետին, Սէուտական Արաբիոյ Հիւպատոսին և նախկին կառավարիչ Անուար Գէյ Նուսէյպիի։

— Նոյն առիթով, Ամեն. Ս. Գատրիարքը իր, Ս. Յակոբեանց Միաբանութեան և Յորդանանի հայութեան անունով շնորհաւորական հեռագիր մը յղեց Ամմանի Արքունիք։

● Դշ. 18 Փետր. — Գապական Նուիրակ Մօնս. Լինուս Ծանինի այցելեց Գատրիարքարան, անձամբ Ն. Ամենապատուութեան յանձնելու Ս. Գապին շնորհակալութեան նամակը և իր ստորագրութիւնը կրող մեծադիր նկարը, Ս. Գատրիարքին հետ երուսաղէմ նկարուած։

● Շբ. 29 Փետր. — Բրիտանական Ընդհ. Հիւպատոս Գր. Ալասթէյր Մէյթլընտ Ս. Քաղաքէս պաշտօնով փոխադրուելուն առթիւ հրաժեշտի այցելութեան եկաւ Գատրիարքարան։

— Նոյն օրը, Լիբանանեան Հիւպատոս Գր. Ֆէրիս Սթէփան ևս նոյն առիթով հրաժեշտի այցելութեան եկաւ Գատրիարքարան։

أصدرها - بطريركية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول - صاحب النافة رئيس الاساقفة هايكازون أبراهميان
العدد ٣ تطبع في مطبعة دير الارمن - القدس مارس ١٩٦٤

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Archbishop Haïgazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

digitised by A.R.A.R.@